Արձանագրություն N 3
«ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «12» փետրվարի 2019թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Պապյանը, Լ. Հարությունյանը, Լ. Ոսկանյանը
Բացակայում է՝	Ն.Մեսրոպյանը,
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Մկրտչյանը

1.գնանշման հարցում ընթացակարգի հայտերում անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ
(Կ. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) սահմանված ժամկետում <<Արմստրոյ>> ՍՊԸ-ի կողմից շտկվել է անհամապատասխանությունը՝ ներկայացվել է հրավերով պահանջվող լիցենզիաները և ներդիրները,

բ) <<Տրանսնախագիծ>> ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը /որևէ փաստաթուղթ չի ներկայցրել/,

գ) ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ստացվել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 06.02.2019թ. թիվ 05/15.3/1394-19 գրության պատասխանը, համաձայն որի լիցենզավորող հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 1-ի նիստում տրամադրվել են քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեության տեսակների լիցենզիաներ՝ կից ներդիրներով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2.գնանշման հարցում ընթացակարգի բանակցությունների վարման մասին
(Կ. Գասպարյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով հրավերի 7.10 կետը՝ մերժել <<Տրանսնախագիծ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը: Հրավերի 7.16 կետի համաձայն՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն <<Տրանսնախագիծ>> ՓԲԸ-ի մասով ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն համապատասխան ընթացք տալու համար:

2. Հիմք ընդունելով հրավերի 7.6 կետը՝ գնման ընթացակարգի մասնակիցներին հրավիրել բանակցությունների:

3. Բանակցությունների վարման համար հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019թ փետրվարի 15-ին ժամը 15:00-ին, ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, 2-րդ հարկ, 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Լ. Ոսկանյան

_____ Լ. Հարությունյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Ա. Մկրտչյան